

ԱՆՏԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Գևորգ Բաղդասարյան

*Երևան քաղաքի դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

«Կանխավարկած» (praesumptio) եզրույթը լատինական ծագում ունի և թարգմանաբար նշանակում է կանխադրույթ, նախնական պնդում, ենթադրություն: Կանխավարկածները հետազոտության առարկա են ոչ միայն իրավագիտության, այլև փիլիսոփայության, հոգեբանության, տրամաբանության և մի շարք այլ գիտությունների համար, ինչով ևս բացատրվում է այն հանգամանքը, որ դրանց բնորոշման, բնույթի, բովանդակության մեջ իրավականի և տրամաբանականի հարաբերակցության, դասակարգման վերաբերյալ միասնական մոտեցում չկա: Տեսության մեջ կարելի է հանդիպել իրավական կանխավարկածի՝ որպես ի սկզբանե իրավական երևույթի¹, իրավունքի ոլորտում գործադրվող տրամաբանական երևույթի², իրավական կարգավորման եղանակի³ և բազմաթիվ այլ բնորոշումներ, որոնցում չկա նույնիսկ միասնական տերմինաբանություն:

Իրավական կանխավարկածն իրավաբանական փաստերից բխող դատողություն է մեկ այլ իրավաբանական փաստի մասին: Այն ոչ թե ցանկացած, այլ իրավաբանական, այսինքն՝ իրավական նշանակության փաստի մասին կանխադրույթ է: Այս առումով ընդունելի չեն իրավական կանխավարկածի այն բնորոշումները, որոնցում դրա իրավական բնույթը պայմանավորում են իրավունքի նորմերում ամրագրման հետ՝ այդ կերպ նեղացնելով իրավական կանխավարկածների շրջանակը⁴:

Իրավական կանխավարկածների դասակարգման վերաբերյալ բազմաթիվ մոտեցումներում գրեթե համընդհանուր ընդունելություն ունի դրանց բաժանումն օրինական (օրենքով նախատեսված) և փաստի (փաստական) կանխավարկածների⁵: ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում, ինչպես գրեթե բոլոր երկրների օրենսդրություններում, իրավական կանխավարկածներն ամրագրված են ինչպես ուղղակի-

¹ Տե՛ս **Ливенталь Я. Б.** К вопросу о презумпциях в советском гражданском процессе. //Советское государство и право. 1949, № 6, էջ 56, **Ойгензихт В.А.** Понятие гражданско-правовых презумпций. //Советское государство и право, 1975, № 10, էջ 25.

² Տե՛ս **Строгович М.С.** Учение о материальной истине в уголовном процессе, М., 1947, էջ 168, **Бабаев В.К.** Презумпций в советском праве. 1974, Горький, Изд-во ГВШ МВД СССР, էջ 13.

³ Տե՛ս **Курсова О.А.** Фикции в российском праве. Дисс. ... канд юрид. наук. Н. Новгород, 2001, էջ 84.

⁴ Տե՛ս **Нахова Е.А.** Роль презумпций и фикций в распределении обязанностей по доказыванию. Дисс... канд. юрид. наук. Саратов, 2004, էջ 48.

⁵ Համաձայնելով հանդերձ կանխավարկածների այս դասակարգման տրամաբանությանը՝ այն իմաստավորող եզրույթներին վերաբերվում ենք վերապահումով: Բանն այն է, որ օրինական կանխավարկած ձևակերպումը թյուր կարծիք է ձևավորում օրենքով չնախատեսված կանխավարկածների անօրինականության և կիրառման անթույլատրելիության մասին: Ինչ վերաբերում է փաստի կանխավարկած եզրույթին, ապա այնքանով, որքանով բոլոր կանխավարկածները փաստի մասին են, հետևաբար այն շատ ավելի լայն հասկացություն է, քան օրենսդրական ամրագրում չստացած իրավական կանխավարկածը:

րեն, այնպես էլ անուղղակիորեն: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգիրքն ամրագրում է ընդհուպ անհաղթահարելի իրավական կանխավարկած. թեև տեսականորեն որևէ մեկը հակառակը բացառել չի կարող, բայց 12 տարին չլրացած անձի անօգնակա-նությունը ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է որ-պես բացարձակ կանոն, անհերքելի փաստ:

Քրեական արդարադատության համակարգի ամենաճանաչված կանխավար-կածն անմեղության կանխավարկածն է, որը՝ որպես արդար դատաքննության իրա-վունքի անբաժան տարր, իր կարևորությամբ և հիմնարար բնույթով վաստակել է ինքնուրույն քրեադատավարական սկզբունքի կարգավիճակ և ամրագրում ստացել քրեական արդարադատության ժողովրդավարական համակարգ ունեցող գրեթե բոլոր պետությունների օրենսդրություններում: Անմեղության կանխավարկածը քրեադատավարական երաշխիքների բարդ համակցություն է, որի բաղադրիչները սերտորեն փոխկապակցված և նույնիսկ անտարանջատելի են: Թեև անմեղության կանխավարկածի վերլուծությամբ առանձնացվում են դրա մի շարք այլ ասպեկտ-ներ ևս, ինչպես օրինակ լռելու իրավունքն է¹, բայց քննարկվող սկզբունքի հիմնա-կան բաղադրիչները երեքն են.

1. անձը հանցագործության մեջ մեղավոր կարող է ճանաչվել բացառապես օ-րինական ուժի մեջ մտած դատավճռով (անձի դատավարական կարգավիճակի կանոն և երաշխիք),

2. անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, մեղադրանքի ապա-ցուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները (ա-պացուցման բեռի կանոն),

3. չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի (ապա-ցույցների գնահատման կանոն):

Չնայած անմեղության կանխավարկածի այս երեք տարրերը ոչ բոլոր իրավա-կան ակտերում են ուղղակի ամրագրում ստացել, սակայն դրանցից որևէ մեկի գո-յությունը վիճելի չէ: Նույն տրամաբանությամբ, թեև ի տարբերություն ՀՀ սահմա-նադրության 1995 թ. և 2005 թ. խմբագրությունների, գործող խմբագրությունն անմե-ղության կանխավարկածի վերջին երկու բաղադրիչներն ուղղակիորեն չի ամրագ-րում, բայց քննարկվող հիմնարար արժեքի կառուցվածքում դրանց անփոխարինե-լիությունը թույլ է տալիս պնդել, որ դրանք շարունակում են մնալ անմեղության կան-խավարկածի առանցքը: Ի տարբերություն առաջին կանոնի, որն առավելապես արտահայտում է անմեղության կանխավարկածի արտաքին, հռչակագրային կող-մը, ապացուցման բեռի և ապացույցների գնահատման կանոններն ունեն զուտ գործնական նշանակություն. եթե անմեղության կանխավարկածի առաջին կանոնը երաշխավորում է, որ անձն անմեղ է, քանի դեռ բացառիկ արդարադատական ակ-տով հակառակը չի փաստվել, և պաշտպանում է անձին նրա մեղավորության մա-սին կանխակալ դիրքորոշումից ու հասարակական ընկալումից, ապա հաջորդ եր-կու կանոնները կազմում են ապացուցման գործընթացի հիմքը և ուղենշում են, թե ինչպես կարող է անմեղության կանխավարկածը հաղթահարվել՝ անձի մեղավո-րությունն ապացուցվել:

Անմեղության կանխավարկածը՝ որպես դատավարական երաշխիք ու քրեա-կան դատավարության իրավունքի սկզբունք, երբեք գիտական ուշադրության պա-կաս չի ունեցել: Դրա փիլիսոփայական և զուտ իրավաբանական առանձնահատ-կությունները, սակայն, յուրաքանչյուր խորքային վերլուծություն դարձնելով հե-տաքրքիր ու արժեքավոր, դրա կիրառման խնդիրներին վերջնական լուծում չեն ա-պահովել: Չի կարելի չնկատել նաև, որ առավել ուսումնասիրված են անմեղության կանխավարկածի փիլիսոփայական ասպեկտներն ու դրա առաջին անձի անմե-

¹ St`u Стандарты справедливого правосудия: международные и национальные практики. Под ред. Т.Г. Морщаковой. М., 2012, էջ 247-248.

ղության վերաբերյալ կանոնը՝ անմիջապես հարող գործնական հիմնախնդիրների հետ, ինչպիսին, օրինակ, ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձի մեղավորության ճանաչումն է: Հատկապես չքննարկված է անմեղության կանխավարկածը՝ որպես ապացույցների գնահատման չափանիշ, այսինքն՝ չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու կանոնի գործողության սահմանների հիմնահարցը:

Չփարատված կասկածների վերաբերյալ կանոնը ենթակա է լայն մեկնաբանության. հոգուտ մեղադրյալի մեկնաբանության է ենթակա ոչ միայն հենց անձի մեղավորության հարցի, այլև նրա համար ցանկացած բարենպաստ հանգամանքի կապակցությամբ կասկածը: Անձին առաջադրված մեղադրանքին վերաբերող ցանկացած հանգամանքի առկայության կամ բացակայության կապակցությամբ կասկածները ենթակա են մեկնաբանության այն հաշվով, որ առկա կամ բացակա դիտվեն, եթե բարենպաստ են նրա համար: Բայց քրեական դատավարության գիտությանն ու պրակտիկային մշտապես հուզել է նաև այն հարցը, թե արդյոք հոգուտ մեղադրյալի մեկնաբանության է ենթակա ցանկացած կասկած՝ անկախ դրա բնույթից, բովանդակությունից ու խորությունից՝ նկատի ունենալով, որ հանցագործության դեպքի հանգամանքների բացահայտումը՝ որպես հետագա ճանաչողական գործընթաց, երբեք չի կարող ապահովել դրանց բոլորի անվերապահ իմացությունը, և տարբեր բնույթի ու մակարդակի կասկածներ կարող են լինել միշտ, դրանք բացառել հնարավոր չէ: Ավելին, այդ հանգամանքների վերաբերյալ կասկածներ կարող են առաջ բերվել նաև արհեստականորեն՝ ստեղծելով դրանք փարատելուն ուղղված անվերջ դատավարական գործընթացի անհրաժեշտություն:

«Վճռաբեկ դատարանը, իր նախադեպային իրավունքում անդրադառնալով անմեղության կանխավարկածին՝ որպես ապացույցների բավարարության չափանիշի, արձանագրում է, որ հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում և փաստում, որ «(...) ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա (...)»¹: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ «(...) քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր»² ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»³:

¹ Մարգար Հակոբյանի վերաբերյալ ԵԿԴ/0168/01/12 քրեական գործով 2013 թվականի մայիսի 8-ի որոշման 13-րդ կետը:

² «Հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշն ըստ էության մայրցամաքային իրավունքի «ապացույցների բավարարություն» հասկացության անգլոամերիկյան համարժեքն է, որը դատական իրավունքում օգտագործվել է դրա բովանդակությունը հստակեցնելու համար:

³ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ ԵԿԴ/0252/01/13 քրեական գործով 2014թ. հոկտեմբերի 31-ի որոշման 31-33-րդ կետերը:

Կասկածի ողջամտությունը, որպես այն հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու պայման, բնականաբար վերացական կամ հայեցողական լինել չի կարող և պետք է գնահատվի գործի այլ հանգամանքների համատեքստում: Փաստի վերաբերյալ կասկածը ողջամիտ է, եթե հաստատված այլ հանգամանքները հնարավորություն չեն տալիս հետևության հանգել այդ փաստի՝ սովորականից բարձր հավանականության մասին, կամ հակառակ փաստը նույնքան ողջամիտ և հավանական է: Այս առումով անմեղության կանխավարկածը՝ որպես ապացուցման տրամաբանական գործընթացի բաղկացուցիչ մաս, երբեմն սահմանակից է փաստի կանխավարկածներին և սահմանափակվում է դրանցով: Չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու կանոնն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է կասկած առաջացնող փաստի կանխավարկածը, այսինքն՝ երբ հաստատված այլ փաստերը թույլ են տալիս հավանականության բարձր աստիճանով հետևության հանգել կասկած առաջացնող հանգամանքի մասին:

Փաստի կանխավարկածների իրավական նշանակությանը, դրանցով անմեղության կանխավարկածի սահմանափակման հնարավորությանն ու անհրաժեշտությանը հարկ ենք համարում անդրադառնալ դրանց գոյության հիմքերի համատեքստում, որոնց մասին իրավական կանխավարկածի՝ որպես իրավական-տրամաբանական հասկացության գրեթե բոլոր բնորոշումներում այս կամ այն կերպ խոսվում է:

Այսպես, Վ. Կ. Բաբաևը նշում է, որ իրավական կանխավարկածն իրավական նորմերում ամրագրված կանխադրույթ է իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության մասին, որը հիմնված է դրանց և առկա փաստերի միջև կապի վրա և հաստատված է նախորդող փորձով¹:

Ինչպես մեջբերված, այնպես էլ բազմաթիվ այլ հեղինակների՝ Մ. Ս. Ստրոգովիչի², Օ. Ս. Իոֆֆեի և Մ. Դ. Շարգորոդսկու³, Յու. Կ. Օսիպովի⁴, Ե. Բ. Տարբագանայի⁵, Օ. Կ. Լևչենկոյի⁶, Լ. Դ. Կոկորևի⁷ և այլոց կողմից առաջարկվող բնորոշումներում հստակ նշվում է փաստի կանխավարկածի՝ այլ փաստերով պայմանավորվածության, դրանցից բխելու, ուստի՝ այդ կանխավարկածների օբյեկտիվ ու բնական բնույթի մասին: Այդ հանգամանքն առավել պատկերավոր է բնորոշում Վ.Ի. Կամինսկայանի՝ փաստելով, որ իրավական կանխավարկածն օրենքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված այն դրույթն է, որում մարդկային վարքագծից բխող հարաբերություններում իրերի, երևույթների դասավորությունն ընդունվում է որպես բնական ու նորմալ, ինչի ուժով դրանք հատուկ ապացույցների անհրաժեշտություն չունեն⁸:

Ա.Վ. Կորնակովան նշում է, որ փաստական կանխավարկածները հիմնված են մարդկային բազմադարյա փորձի ընդհանրացման վրա, այդ պատճառով դրանցում ամրագրված գիտելիքը բարձր աստիճանի հավանական է, այսինքն՝ ավելի բարձր

¹ Տե՛ս **Бабаяев В.К.** Презумпций в советском праве. Горький, 1974, Изд-во ГВШ МВД СССР, էջ 13:

² Տե՛ս **Строгович М.С.** Учение о материальной истине в уголовном процессе, М. 1947, էջ 168:

³ Տե՛ս Вопросы теории права /О.С. Иоффе, М.Д. Шаргородский. М., 1961, էջ 262:

⁴ Տե՛ս Гражданский процесс: Учебник для вузов /Под ред. М.С. Шакарян. М., 1996, էջ 212:

⁵ Տե՛ս **Тарбагаева Е.Б.** Роль законных презумпций в процессе судебного доказывания и познания //Правоведение. 1982, № 3, էջ 55:

⁶ Տե՛ս **Левченко О.В.** Уголовно-процессуальное познание и его роль в установлении истины по делу //Государство и право. 2003, № 4, էջ 68–75:

⁷ Տե՛ս **Кокорев Л.Д.** Уголовный процесс: доказательства и доказывание /Л.Д. Кокорев, Н.П. Кузнецов. Воронеж, 1995, էջ 255-257:

⁸ Տե՛ս **Каминская В.И.** Учение о правовых презумпциях в уголовном процессе. М., 1948, էջ 3:

է դրա ճշմարտացիության, քան հակառակի հավանականությունը: Հենց դրանով է պայմանավորված կանխավարկածների օգտագործման հնարավորությունը ապացուցման պրոցեսում: Ինդուկտիվ ընդհանրացման վրա հիմնված կանխավարկածները հնարավորություն են տալիս դրանք օգտագործել նույնական երևույթների և իրավիճակների գնահատման ժամանակ¹:

Փաստի կանխավարկածի՝ որպես ճանաչողության միջոցի բնական և օբյեկտիվ բնույթի մասին է վկայում նաև դրա պատմական զարգացումը: Միջնադարյան իրավաբանների կողմից առաջարկված հայտնի ամենահին՝ *praesumptiones juris, praesumptiones et de jure* և *praesumptiones hominis* եռակազմ դասակարգման մեջ վերջինը մեկնաբանվում էր որպես իրավական նորմերով չսահմանված համամարդկային ենթադրություն, որը կարող են կատարել դատավորները՝ կոնկրետ գործի հանգամանքների վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ²: Ընդհանրապես, միջնադարում կանխավարկածների նկատմամբ հետաքրքրությունն աճեց՝ «նախապես հաստատված ապացույցների» հայեցակարգի ուժով, կկանխավարկածների տեսությունն ամբողջությամբ կլանեց ապացույցների տեսության ոլորտը՝ արտահայտվելով ոչ լրիվ ապացուցման կանոնողակի ապացույցների գաղափարի միջոցով: Միջնադարի իրավաբանների կարծիքով, այն դեպքերում, երբ օրենքը թույլ է տալիս մի փաստի հիման վրա հետևություն անել երկրորդի մասին, առկա են ապացույցի ինքնուրույն տեսակ հանդիսացող կանխավարկածներ, որոնք նույնացվում են անուղղակի ապացույցների հետ³:

Ռուսական իրավագիտությունն իրավական կանխավարկածներին ուշադրություն դարձրեց 19-րդ դարում՝ պահպանելով կանխավարկածի բնական բնույթի վերաբերյալ մոտեցումը: Այս ժամանակահատվածում էր Դ.Ի. Մեյերը պնդում, որ փաստի գոյության կանխավարկածը հիմնվում է այն բանի վրա, որ այն, ինչ կատարվում է բնականորեն, ենթադրվում է ճշմարտացի, և հակառակը՝ անսովոր փաստը, չլինելով ապացուցված, չի համարվում ճշմարտացի⁴:

Խորհրդային քրեական դատավարության իրավունքին ու տեսությանը, սակայն, ապացուցման գործընթացքում անմեղության կանխավարկածից բացի բնորոշ էին, այլ կանխավարկածների մերժումն այն հիմնավորմամբ, որ դրանք ստեղծում են վերացական ճշմարտություն՝ հակադրվելով ճշմարտության որոշակիության մասին մարքս-լենինյան դիալեկտիկային: Խորհրդային քրեական դատավարությունում բացարձակացված էր յուրաքանչյուր փաստի կատարյալ ապացուցման գաղափարը, և սվիններով էր ընդունվում որևէ փաստի բարձր հավանականության մասին պնդումը⁵: Այս մոտեցումն զգալի հետք է թողել նաև հետխորհրդային քրեական դատավարությունում՝ հիմք դառնալով ապացույցները գնահատելիս իրավակիրառ պրակտիկայում այնպիսի մոտեցումների, որոնցում չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու կանոնը կիրառվում է ողջամտության սահմաններից դուրս, և ճանաչողության բնական օրենքներն անտեսվում են:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավունքում կայուն է այն մոտեցումը, որ բոլոր իրավական համակարգերում կանխավարկածների ճանա-

¹ St`u **Корнакова С.В.** Об установлении истины в уголовном судопроизводстве России в свете принципа состязательности уголовного процесса// Юридическая наука и правоохранительная практика, № 1, 2010, էջ 73-79:

² St`u **Булаевский Б.А.** Классификация правовых презумпций // Журнал российского права, № 11, 2010, էջ 74:

³ St`u **Старовойтова Е.И.** Генезис правовых презумпций //Известия Байкальского государственного университета, № 6, 2010, էջ 147:

⁴ St`u **Мейер Д.И.** О юридических вымыслах и предположениях, о скрытых и притворных действиях. Казань, 1984, էջ 14:

⁵ St`u **Строгович М.С.** Право обвиняемого на защиту и презумпция невиновности. Москва, изд. Наука, 1984, էջ 67-91:

չունն անխուսափելի է: Կոնվենցիան թեև սկզբունքորեն չի բացառում դրանք, սակայն պետություններին պարտավորեցնում է չզերազանցել այդ կապակցությամբ որոշակի բանական շեմը: *Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի, Ֆամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի և Իբսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործերով եվրոպական դատարանը կոնվենցիայի խախտում չի արձանագրել օրենքի կամ փաստի վրա հիմնված կանխավարկածով փաստերի հաստատման դեպքերում: Ընդհանուր առմամբ հնարավորինս չեզոք գտնվելով ապացույցների բավարարության չափանիշներ սահմանելու հարցում՝ Եվրոպական դատարանի իրավունքը խիստ է վերաբերվում ապացուցման բեռի տեղափոխման ևամբաստանյալի կողմից մեղադրանքը հերքող վարկած առաջ չբաշխելու հանգամանքն ի վնաս նրա մեկնաբանելու դեպքերին: Օրինակ՝ *Թելֆներն ընդդեմ Ավստրիայի*¹ գործով Եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի խախտում է արձանագրել նկատի ունենալով, որ վրաերթի համար մեղադրվող դիմումատուն, որը սովորաբար վարել էր ավտոմեքենան, պնդել է, որ դեպքի ժամանակ անձամբ չի վարել այն, ավելի մանրամասն տեղեկություններ չի հայտնել վարորդի վերաբերյալ: Եվրոպական դատարանը, համաձայնելով, որ դատարանները փաստերը գնահատելիս կարող են հետևությունների հանգել նաև մեղադրանքի կապակցությամբ մեղադրյալի խելամիտ բացատրությունների բացակայության հիման վրա, փաստում է, որ այդ հետևությունները պետք է լինեն ողջամիտ: Միջազգային իրավական պրակտիկան վկայում է նաև, որ փաստական կանխավարկածները կիրառելի են հատկապես այն հանցագործությունների գործերով, որոնց դեմ պայքարը հռչակված է որպես համընդհանուր առաջնահերթություն: Դրա ապացույցը ապօրինի հարստացման գործերով ապացուցման բեռը մեղադրյալի վրա դնելու մասին Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 20-րդ հոդվածի դրույթն² ու *Ֆամ Հոանգի* գործն է, որով դիմումատուի ուղեբեռում թմրամիջոցի առկայությունը բավարար էր դիտվել՝ փաստելու, որ այն հենց դիմումատուին էր պատկանում:

Փաստի կանխավարկածների օբյեկտիվ ու բնական գոյության վկայությունն է նաև ՀՀ դատական իրավունքում դրանց լքելյան կիրառությունը: Վճռաբեկ դատարանի պրակտիկան փաստում է, որ առանձին հանցագործությունների վերաբերյալ գործերով ապացուցման առարկան կազմող առանձին հանգամանքներ հնարավոր է համարվում ապացուցված դիտել գործով հաստատված այլ հանգամանքների հիման վրա: Այսպես, *Վարդան Մաթևոսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Անձի կողմից խարդախություն կատարելու դիտավորության առկայության մասին, մասնավորապես, կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավորագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, կեղծ ձեռնարկություն ստեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն»:

Կամ՝ համաձայն *Արևիկ և Ծովինար Սահակյանների* վերաբերյալ գործով որոշման՝ «(...) ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու կամ այդպիսիք պատճառելու դիտավորության առկայության հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել տուժողի տարիքը, առողջական վիճակը, ինչպես նաև հանցավորի ֆիզիկական տվյալները, հարվածի տեղակայումը,

¹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները՝ <https://hudoc.echr.coe.int/kajproum>:

² Տե՛ս **Դիլբանդյան Ս.** Անմեղության կանխավարկածը և ապացուցման պարտականությունը քրեական դատավարությունում. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2017, էջ 434-444:

բնույթը և այլ հանգամանքները, որոնք իրենց համակցությամբ կարող են վկայել, որ տուժողին պատճառվել է ֆիզիկական ցավ»:

Քննարկելով սպանության փորձի սուբյեկտիվ կողմի հատկանիշների ապացուցման հարցը՝ Վճռաբեկ դատարանը, զարգացնելով *Ս. Հունիկյանի և Գ.Սանուկյանի* վերաբերյալ գործերով որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումն այն մասին, որ «(...) կոնկրետ դեպքում հանցագործության գործիքը կամ միջոցը, եղանակը, հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը, ինչպես նաև առկա այլ օբյեկտիվ հանգամանքները կարող են վկայել հանցավորի կողմից մահվան առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը նախատեսելու, հետևաբար վերջինիս մոտ ուղղակի դիտավորության առկայության մասին», *Գ. Թսունյանի և մյուսների* վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է, որ «(...) կոնկրետ իրադրությունում հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթն ու տեղակայումը, օրինակ, կենսական կարևոր օրգանների շրջանում բազմաթիվ մարմնական վնասվածքների առկայությունը, հարվածների ուժգնությունը և ինտենսիվությունը, համակատարողների առկայությունն ու քանակը, նրանցից յուրաքանչյուրի գործողությունների բնույթը, ինչպես նաև տուժողի մահը կանխելու ուղղությամբ քայլեր չձեռնարկելը, նման հետևանքի առաջացման նկատմամբ անտարբերություն դրսևորելը կարող են վկայել այն մասին, որ հանցավորը տուժողին մահ պատճառելու իրական հնարավորությունն առնվազն նախատեսում է, գիտակցում է, որ եթե մահն առաջանա, ապա բխելու է իր արարքներից, միևնույն ժամանակ անտարբերություն է դրսևորում դրա առաջացման նկատմամբ կամ հույսը դնում է գոյություն չունեցող, վերացական հանգամանքների վրա, այսինքն՝ գործում է անուղղակի դիտավորությամբ»:

Անդրադառնալով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու իրացման նպատակին՝ Վճռաբեկ դատարանը *Սարտիկ Բոյանի* վերաբերյալ գործով որոշմամբ նշում է, որ «(...) իրացման նպատակի մասին կարող է վկայել ինչպես ձեռք բերողի (ստացողի, սպառողի) հետ համապատասխան պայմանավորվածության առկայությունը, այնպես էլ գործի մյուս հանգամանքները. թմրամիջոցներ ձեռք բերելը և պահելը դրանք չգործածող անձի կողմից, զգալի քանակությունը, իրացման համար հարմար փաթեթավորումը և այլն: Ընդ որում, հանցավորից առգրավված թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնըստինքյան դրանք իրացնելու անվիճելի ապացույց չէ. դա պետք է գնահատել միայն իրացման նպատակի մասին վկայող այլ տվյալների հետ համակցության մեջ»:

Մեջբերված դիրքորոշումների վերլուծությունը վկայում է, որ դրանցից յուրաքանչյուրում սահմանվում են կոնկրետ տիպական իրավիճակներում հանգամանքների հաստատման կամ հերքման դեղատոմսեր՝ կառուցված փաստական կանխավարկածների վրա: Այն փաստերը, որոնք դրանցում կանխադրվում են, ո՛չ այդ և ո՛չ էլ որևէ այլ իրավիճակում անվերապահորեն հաստատված կամ անհերքելի համարվել չեն կարող: Թմրանյութ չօգտագործող անձի կողմից հավասար չափաբաժիններով փաթեթավորված զգալի քանակությամբ թմրամիջոց պահելու դեպքում իրացման նպատակի կամ բավարար ֆինանսական միջոցներ չունեցող անձի կողմից կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ գործարք կնքելու դեպքում գույք հափշտակելու դիտավորության բացակայությունը, որպես այդպիսին, բացառված չէ: Բայց այդ հանգամանքները համապատասխան իրավիճակներում օժտված են հավանականության այնպիսի բարձր աստիճանով, որը վկայում է հակառակի ոչ ողջամիտ լինելու մասին, այսինքն՝ դրանց հավանականությունն ավելի բարձր է, քան հակառակինը:

¹ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները՝ www.datalex.am կայքում:

Այս մոտեցումները, սակայն, շատ հաճախ անտեսվում են և ապացուցման հանրային-իրավական գործընթացում թույլ են տրվում անմեղության կանխավարկածի սկզբունքի իմաստի չափազանցություններ, ողջամտության սահմաններից դուրս կասկածների մեկնաբանություններ հոգուտ մեղադրյալի՝ համապատասխանաբար քրեական հետապնդման մարմնին պարտավոր համարելով ապահովել ընդհուպ այնպիսի հանգամանքերի օբյեկտիվ ճանաչողություն, որոնք ինքնին սուբյեկտիվ են, տեսողական, լսողական կամ այլ ընկալման ենթակա չեն: Օրինակ, քիչ չեն դեպքերը, երբ դատարանները թմրամիջոցը հագուստի վրա կամ մարմնում հատուկ թաքցրած և թմրամիջոց ապօրինի պահելու համար դատապարտված անձի մոտ քրեակատարողական հիմնարկում տեսակցության մտնող անձի մոտ թմրամիջոցն իրացնելու նպատակը հաստատված չեն համարում՝ չփարատված ողջամիտ կասկած դիտելով վերջինիս այն պատճառաբանության պայմաններում, թե թմրամիջոցը 3 տարի առաջ դրել է գրպանում և ՔԿՀ մտնելուց առաջ հայտնաբերելով՝ ուրոշել է այն թաքցնել ամործիներին կապելով կամ ատամի տակ, որպեսզի չհայտնաբերվի¹:

Փաստելով, որ ապացուցման ենթակա հանգամանքների կատարյալ իմացությունն ամենացանկալին է, չի կարելի չնշել, որ իրականությունն ու դրա հիմքում ընկած ճանաչողության բնական օրենքներն այլ բանի մասին են խոսում: Ապացուցման ենթակա ոչ բոլոր հանգամանքների ճանաչողությունն է բոլոր դեպքերում նույնքան հնարավոր, և ոչ բոլոր հանգամանքներն են իրենց բնությամբ ենթակա բացարձակ օբյեկտիվ ճանաչողության: Այն հանգամանքը, որ խորհրդային քրեական դատավարության իրավունքում, այդ թվում՝ դատական իրավունքի աղբյուրներում, խոսվում էր մեղադրանքը բացարձակ ու անկասկած ապացուցելու անհրաժեշտության և նոր միայն անձին դատապարտելու մասին, ամենևին չի նշանակում, որ խորհրդային քրեական դատավարությունում ապացուցումն իրականացվում էր գերբնական հնարավորություններով, անմեղության կանխավարկածն անսահմանափակ էր, իսկ անձի դատապարտման դեպքում նրա մեղավորության մասին կասկածը՝ բացառված: Ժամանակի խոշորագույն հեղինակներից Մ.Ս. Ստրոգովիչը, իր աշխատություններում չթաքցնելով խորհրդային քաղաքական համակարգի ու դրա հիմքում ընկած փիլիսոփայության հետքը և չփարատված կասկածները որևէ դեպքում հոգուտ մեղադրյալի չմեկնաբանելը դիտելով որպես կործանարար կապիտալիստական երևույթ, չէր կարող անուղակիորեն չընդունել փաստի կանխավարկածի գոյությունը: Խոսելով հանդերձ մեղադրյալի մեղավորությունը և մեղադրանքի հիմքում դրված ցանկացած փաստ անվերապահորեն ապացուցելու քրեական հետապնդման մարմինների պարտականության մասին՝ մեծանուն հեղինակը նշում է, որ բոլոր այն դեպքերում, երբ մեղադրյալի բացատրությունները մտացածին են, արհեստական, հակասում են գործի հանգամանքներին, և նրա կողմից առաջ քաշված վարկածները հերքվում են գործի հաստատված հանգամանքներով, դատախազը և դատարանը դրանք պետք է հերքեն՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ²:

Փաստի կանխավարկածներն ապացուցման դատավարական գործընթացում գոյություն ունեն անկախ իրավական ամրագրումից: Հաստատված փաստերի հիման վրա դրանց հետ անմիջականորեն կապված, դրանցով դրսևորվող այլ փաստերի մասին եզրահանգելու հնարավորությունը ճանաչողության տրամաբանական գործընթացի անբաժան մասն է: Ապացուցումը, հիմնվելով ինդուկցիայի, դեդուկցիայի, ընդհանրացման և ճանաչողության այլ տրամաբանական օրենքների ու մեթոդների վրա, միշտ ենթադրում է առկա փաստերի գնահատման և ընդհանրաց-

¹ Տե՛ս, օրինակ՝ Գագիկ Մանուկյանի վերաբերյալ ՇՂ1/0039/01/16 գործով դատավճիռը:

² Տե՛ս **Строгович М.С.** Материальная истина и судебные доказательства в советском уголовном процессе. Москва, 1955, էջ 227:

ման հիման վրա որոշակի եզրահանգումներ: Հետևաբար, փաստի կանխավարկածները՝ որպես գործով հաստատված իրավաբանական փաստերի ինդուկտիվ ընդհանրացման հիման վրա այլ իրավաբանական փաստերի մասին կանխադրույթներ, հիմնվում են ճանաչողության՝ որպես մարդկային մտավոր գործունեության, բնական օրենքների վրա, պայմանավորված են դրանցով և օբյեկտիվ են: Այս համատեքստում փաստական կանխավարկածների՝ որպես ապացուցման պրոցեսում ներդրված ֆիկցիայի ապացուցման արհեստական հնարքի մասին պնդումներն ընդունելի չեն¹:

Մյուս կողմից, փաստական կանխավարկածների կիրառումն անսահմանափակ չէ: Ինչպես նշում է Ռ. Մ. Աբդրաշիտովը, կանխավարկածներն անհրաժեշտ են այնտեղ, որտեղ հնարավոր չէ հասնել հանգամանքների կամ երևույթների բացարձակ ապացուցման²: Փաստական կանխավարկածները կիրառելի են բացառապես հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշներին համապատասխանող հանգամանքներն ապացուցելիս՝ այնքանով, որքանով կատարված արարքի նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքը, նպատակը, դրդումները, շարժառիթը, հույզերը՝ որպես բացառապես մարդու մտքում գոյություն ունեցող և ուղղակի ընկալման ոչ ենթակա հանգամանքներ, կատարյալ ճանաչողության ենթակա չեն: Այնքանով, որքանով այդ հանգամանքներն արտահայտվում են հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշներում, դրանց ճանաչողությունը բազմաթիվ դեպքերում իրականացվում է փաստական կանխավարկածների հիման վրա, այսինքն՝ դրանց վերաբերյալ ապացուցողական գիտելիքը ձեռք է բերվում փաստական այլ հանգամանքների վերլուծությամբ՝ դրանց միջև օբյեկտիվ անբաժանելի կապերի վերհանման արդյունքում: Թեև մեղադրյալի բացատրություններն էական նշանակություն ունեն և պետք է ունենան մեղադրանքի կապակցությամբ կասկածների ողջամտությունը գնահատելու համար, սակայն փաստական կանխավարկածները չեն կարող միջոց դառնալ մեղադրյալի վրա ուղղակիորեն իր անմեղության ապացուցման բեռ դնելու կամ լքելու և մեղադրանքի առթիվ բացատրություն չներկայացնելու հանգամանքն ի վնաս նրա մեկնաբանելու համար: Իսկ փաստական կանխավարկածի հիման վրա որևէ հանգամանքի հաստատման դեպքում այն հերքելու՝ մեղադրյալի դատավարական շահի մեծացումն ու դրանք հերքելուն ուղղված նրա ակտիվ վարքագիծը բխում է փաստական կանխավարկածների տրամաբանությունից, ապացուցման բեռի փոխադրում չի հանդիսանում և չի խախտում անմեղության կանխավարկածը:

¹ Տե՛ս **Коголовский И.Р.** Понятие и признаки правовой презумпции.//Теория и практика общественного развития. 2012, №12, էջ 589:

² Տե՛ս **Абдрашитов В.М.** Актуальные проблемы и вопросы понимания и толкования принципа презумпции невиновности в современном праве// Вестник ВолГУ, 2012, № 2, էջ 49:

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ КАК КРИТЕРИЙ ОЦЕНКИ ДОСТАТОЧНОСТИ ДОКАЗАТЕЛЬСТВ

Геворг Багдасарян

*Прокурор города Еревана,
кандидат юридических наук*

Статья посвящена презумпции невиновности как критерию оценки достаточности доказательств. Представляя общую характеристику правовых презумпций, гарантированное значение презумпции невиновности и ее компоненты, автор в качестве темы обсуждения выдвигает проблему границ при толковании правила о применении неустранимых сомнений в пользу обвиняемого и применения презумпции факта в процессе доказательства. Автор приходит к выводу, что это правило ограничивается презумпциями факта, которые, являясь составной частью процесса доказательства, будучи основанными на логических законах познания и обусловленными ими, существуют объективно.

PRESUMPTION OF INNOCENCE AS A CRITERION FOR ASSESSING THE SUFFICIENCY OF EVIDENCE

Gevorg Baghdasaryan

Prosecutor of Yerevan, Candidate of Legal Sciences

The article is devoted to the presumption of innocence as criteria for assessing the sufficiency of evidence. Presenting a general characteristic of legal presumptions, the guaranteed importance of the presumption of innocence and its components, the author, as a topic of discussion, raises the problem of boundaries in interpreting the rule on applying irremovable doubts in favor of the accused and applying the presumption of fact in the process of proof. The author comes to the conclusion that this rule is limited to presumptions of fact, which, being an integral part of the process of proof, being based on the logical laws of knowledge and conditioned by them, exist objectively.

Բանալի բառեր – անմեղության կանխավարկած, փաստի կանխավարկած, չփառաւոված կասկած, ճանաչողության օրենքներ, ապացուցման բեռ

Ключевые слова: презумпция невиновности, презумпция факта, неустранимое сомнение, законы познания, бремя доказывания

Key words: presumption of innocence, presumption of fact, irremovable doubt, laws of knowledge, burden of proof